

### 5.5. Անտառային տնտեսություն և անտառտնտեսական աշխատանքներ 2001թ.

2001թ. ԳՀ անտառային ֆոնդը կազմել է 447.2 հազ. հա, որի մոտ 72.6%-ը ծածկված է անտառներով: Անտառվերականգնման աշխատանքներ են կատարվել 1122.8 հա-ի վրա 2000թ. 1041.9 հա-ի դիմաց, որից անտառի տնկում և ցանքս՝ 322.8 հա-ի վրա (2000թ.՝ 421.9 հա), ընդ որում՝ անտառտնկում պետական նշանակության անտառներում կատարվել է 295.8 հա-ի վրա, արագաճ բարդու արտադրական տնկադաշտերի հիմնադրում և խնամք՝ 50 հա-ի վրա, ցածրարժեք և ցածր լրիվության տնկարկների վերականգնում՝ 30 հա-ի վրա:

Անտառի բնական վերաճին օժանդակող միջոցառումներ են կատարվել 800 հա-ի վրա. ցանկապատվել է 125 հա անտառային տարածք, իսկ 675 հա-ի վրա իրականացվել է անտառային հողերի հանքայնացում: Անտառկուլտուրաների լրացում և անտառպուրակի խնամք կատարվել է համապատասխանաբար 573 և 565.7 հա-ի վրա: Բնափայտային և թփուտային տեսակների ցանքս է կատարվել 5.1 հա տնկարկներում, անտառկուլտուրաների խնամք՝ 2451.7 հա-ի վրա, ծառատեսակների, թփերի պտղային և հատապտղային տեսակների սերմնաբույսերի հիմնում դպրոցներում՝ 4.2 հա-ի վրա, հող է նախապատրաստված անտառկուլտուրաների, տնկարկների, տնկադաշտերի և դպրոցների ստեղծման համար՝ 322.5 հա-ի վրա:

2001թ. մթերվել է 5.5 տ սերմ, որի 92.9%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին (պտղահնդավորներ՝ 0.03 տ, ընկուզապտղավորներ՝ 2.7 տ և այլ՝ 2.4 տ), իսկ մնացած 7.1%-ը կամ 395 կգ-ը բաժին է ընկել փշատերևավորներին (հիմնականում սոճի՝ 349 կգ): Սերմերի մնացորդը տարեվերջին կազմել է 1.4 տ, որի 77.1%-ը բաժին է ընկել սաղարթավոր և ծառաթփային տեսակներին:

2001թ. պետական նշանակության անտառներում անտառի շարք է փոխադրվել անտառկուլտուրաներ 55 հա-ի վրա: Կատարվել է խոտհունձ 50 հա-ի վրա՝ 64 տ:

Անտառհատումներ են կատարվել 3264 հա տարածքի վրա (2000թ.՝ 3198 հա), որի 69.5%-ը կամ 2270 հա-ն կազմել են սանիտարական հատումները, մնացածը՝ անտառվերականգնման (355 հա), անցումային (300 հա), նոսրացման (202 հա), լուսավորման և մաքրման (127 հա), այլ (10 հա) հատումներն են:

Իրացվել է օգտագործման համար պիտանի 58.6 հազ. խիտ խոր.մ փայտանյութ (2000թ.՝ 71.8 հազ.), որի 20.1%-ը կամ 11.8 հազ. խիտ խոր. մ-ը շինափայտ է: Շինափայտի ընդհանուր ծավալի մոտ 56.0%-ը ստացվել է սանիտարական հատումներից:

2001թ. արձանագրվել է անտառային հրդեհների 13 դեպք 266.6 հա տարածքի վրա, 2000թ. համապատասխանաբար 38-ի և 45.7 հա-ի դիմաց: Հրդեհներն ընդգրկել են 126.8 հա անտառածածկ տարածք: Յուրաքանչյուր հրդեհ միջին հաշվով ընդգրկել է 0.1 հա անտառածածկ տարածք (2000թ.՝ 0.7 հա): 11 հրդեհների պատճառ է հանդիսացել բնակչությունը, 1-ի՝ այլ կազմակերպությունները, իսկ 1-ինը՝ գյուղատնտեսական հողատեսքերի հրկիզումը: Անտառային հրդեհներից անտառտնտեսություններին պատճառված վնասը կազմել է 55.7 մլն. դրամ 2000թ. 1.7 մլն. դրամի դիմաց: Այրվել և վնասվել է 42489.4 հազ. դրամ արժողությամբ անտառ արմատի վրա, 363.0 հազ. դրամի մթերված անտառանյութ: Անտառվերականգնման աշխատանքների արժեքը կազմել է 10661.2 հազ. դրամ, տարածքի մաքրմանը՝ 610.0 հազ. դրամ, իսկ հրդեհների մարման ծախսերը՝ 1528.2 հազ. դրամ: Հրդեհների հետ կապված ակտավորված հետաքննության նյութերի քանակը կազմել է 13, որոնցից 6-ը

հանձնվել են իրավապահ մարմիններին: Հետաքննությամբ վճռված տուգանքը կազմել է 2978.7 հազ. դրամ, որից փաստացի գանձվել է 50.0 հազ. դրամ:

2001թ. կատարվել է անտառապաթուղոգիական ուսումնասիրություն 5.8 հազ. հա-ի վրա 2000թ. 1.6 հազ. հա-ի դիմաց: Վերգետնյա պայքարի միջոցառումներ են կատարվել 345 հա-ի վրա 2000թ. 426 հա-ի դիմաց: Չորացած անտառտնկարկների և անտառնշակաբույսերի տարածքը կազմել է 1954 հա (2000թ.՝ 235 հա), որից 707 հա-ն՝ հիվանդություններից, 1247 հա-ն՝ այլ գործոններից (բացառությամբ հրդեհների):

2001թ. անտառի վնասատուների և հիվանդությունների օջախները տարեսկզբին զբաղեցրել են 30.0 հազ. հա, որից 22.0 հազ. հա-ի համար պահանջվել են պայքարի միջոցառումներ, սակայն փաստացի կատարվել են 345 հա-ի վրա: Վնասատուների ու հիվանդությունների օջախները տարեվերջին կազմել են 22.2 հազ. հա (2000թ.՝ 29.2 հազ. հա):

2001թ. տերևակեր վնասատուներով ընդգրկված անտառտարածքները տարեսկզբին կազմել են 23.9 հազ. հա: Պայքարի միջոցառումներ են կատարվել 5 հա-ի վրա: Կրծողներով ընդգրկված տարածքը տարեսկզբին կազմել է 3.6 հազ. հա, որն ամբողջությամբ պայքարի միջոցառումների կարիք ունի: Տարեվերջին կրծողներով ընդգրկված տարածքը կազմել է 3.3 հազ. հա, որի 60.9%-ը պահանջում է պայքարի միջոցառումներ: Անտառի հիվանդությունների օջախները տարեսկզբին կազմել են 660 հա, (2000թ.՝ 1770 հա), որոնք ամբողջությամբ պահանջում են պայքարի միջոցառումներ:

2001թ. իրականացված անտառտնտեսական աշխատանքների ծավալը կազմել է 462.1 մլն. դրամ 2000թ. 514.0 մլն. դրամի դիմաց:

Կատարվել են 28.7 մլն.դրամի անտառչինարարական աշխատանքներ: Կանաչ գոտիների բարեկարգում կատարվել է 280 հա տարածքի վրա, որի համար ծախսվել է 1301 հազ. դրամ:

2001թ. արձանագրվել է անտառխախտումների 1967 դեպք 2000թ-ի 1974-ի դիմաց: Վնասի ընդհանուր գումարն, ըստ անտառխախտման ակտերի, կազմել է 29.9 մլն. դրամ, որի 25.4%-ը կամ 7.6 մլն. դրամն անտառխախտողների կողմից մինչև 01.01.2002թ. կանավոր մուծվել է: Ընդհանուր անտառխախտումների 31.9%-ի կամ 628 դեպքի քննությունը հանձնվել է իրավապահ մարմիններին, որի 74.2%-ի կամ 466 դեպքի վերաբերյալ քրեական գործ է հարուցվել և նշանակվել տույժ: Վերականգնված ընդհանուր գումարը կազմել է 10.9 մլն. դրամ, որի 30.3%-ը վերականգնվել է ըստ վճիռների:

Արձանագրվել է 1658 ապօրինի անտառհատումներ: Հատվել է 7652 ծառ, հատված փայտանյութը կազմել է 2.7 հազ. խոր. մ: Ապօրինի անտառհատումներից վնասը կազմել է ընդհանուր անտառխախտումներից հասցված վնասի 84.6%-ը կամ 25.3 մլն. դրամ: Դրա 28.1%-ը կամ 7.1 մլն. դրամը կանավոր մուծվել է ըստ անտառխախտման ակտերի: Ապօրինի անտառհատումների դեպքերը կազմել են իրավապահ մարմիններին հանձնված անտառխախտումների ընդհանուր դեպքերի 85.5%-ը կամ 537 դեպք, որոնցից 409-ի նկատմամբ հարուցվել է քրեական գործ և նշանակվել է տույժ: Վերականգնված գումարը կազմել է 9.4 մլն. դրամ կամ վճռված ընդհանուր տուժազումարի 37.1%-ը:

Արձանագրվել է անասունների չթույլատրված արածեցման 85 դեպք 2000թ. 80-ի դիմաց: Չթույլատրված տարածքում արածեցվել է 4856 գլուխ անասուն 2000թ. 716-ի դիմաց, վնասի գումարը կազմել է 3.1 մլն. դրամ կամ անտառխախտումների ընդհանուր վնասի 10.4%-ը: Իրավապահ մարմիններին հանձնված այդպիսի 50 դեպքերի առնչությամբ վերականգնված գումարը կազմել է գանձման ենթակա ընդհանուր գումարի 6.7%-ը կամ 729.2 հազ. դրամ:

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Արձանագրվել է անտառային տարածքի հողազավթման 60 դեպք, զավթված տարածքը կազմել է 114.9 հա, վնասի գումարը՝ 795.1 հազ. դրամ: Իրավապահ մարմիններին հանձնվել է 38 գործ: Հողազավթողների կողմից 118.1 հազ. դրամ կանավոր մուծվել է:

Արձանագրվել է որսականոցների խախտումների 160 դեպք: Վնասը կազմել է 619.5 հազ. դրամ, որի 3.2%-ը կամ 20 հազ. դրամը կանավոր մուծվել է ըստ անառնախախտումների ակտերի: Իրավապահ մարմիններին է հանձնվել 2 գործ: